

Արգելախուլթեր բաց ծովում

Հյուրանոցի սպասարահը դատարկ էր: Պատի ժամացույցները, որոնք ցույց էին տալիս աշխարհի հինգ խոշորագույն քաղաքների ժամերը, կանգ էին առել: Անկյունի սեղանի զանգը վաղուց արդեն չէր զնգացել, իսկ ափսեի միջի կոնֆետները էժանագին դիզայնի մի մասնիկն էին կազմում: Բարի կողքի ջրի սարքի ջուրը հագիվ մի բաժակ տաք թեյի հերիքեր: Պատին հենված փափուկ բազմոցները շատ ավելի հին էին, քան հյուրանոցի հատակի կարմիր արյունոտ գորգը: Շունչը պահելու դեպքում կարելի էր լսել հին սովետական վինիլային երաժշտություն: Բայց ամենակարեւորը՝ սրահի կենտրոնում կար մի սեղան՝ վրան դատարկ ծաղկաման, երկու փամփուշտ եւ սուր ծայրով մատիտ:

Գեղեցիկ սպորտային կոշիկներ, հասարակ կապույտ ջինս եւ ակնոց: Բացի այս ամենից՝ ժանը միշտ իր հետ ուներ պայուսակ, որի մեջ տարբեր անհրաժեշտ իրեր էր պահում: Հասարակ լինելով հանդերձ՝ նա ուներ մի յուրահատուկ դաջվածք: Նրա աջ ձեռքի վրա կար մի փոքրիկ ինքնաթիռ: Ժանը մանկուց սիրել է ինքնաթիռներ: Մասնագիտությամբ նախկին օդաչու եւ ինժեներ էր: Ըստ սովորության ոչ մի տեղ առանց պայուսակի եւ անհրաժեշտ փաստաթղթերի չէր գնում: Մասնագիտությունից մնացած սովորությունները դեռ իշխում են: Շատ պատասխանատու եւ ճշտապահ էր: Նրա պայուսակից կախված ռետինե թեւևոցները խոսում էին այն մասին, որ նա բազում անգամներ մարաթոն էր վազել: Հիմնականում աշխատանքից կուտակած գումարով, որոշել էր ճանապարհորդել եւ տեսնել մի քանի երկիր, որոնք չէր հասցրել այցելել: Նաեւ մտքին դրել էր վազել նոր վայրերում: Ժանը կիսով չափ ռուս եւ կիսով չափ ֆրանսիացի էր: Նրա բաց գույնի մազերը, լայն ժայիտը եւ գրպանի քարտեզը միշտ օգնում էին, որ նույնիսկ իր սեփական երկրում իրեն զբոսաշրջիկի տեղ դնեին եւ օգնեին: Սիրում էր մարդկանց մոտենալ եւ իր ֆրանսիական ակցենտով տարբեր հարցեր տալ:

-Շը'իսկ, շըր'իսկ,- հանկարծակի իրար հետեւից լսվեցին ձայներ: Ժանը հասկացավ, որ կարծես սեղանի կողմից եկան ձայները: Մոտեցավ ու տեսավ, որ փամփուշտներն իրենց տեղում չեն: Հայացքը ներքեւ ուղղելով՝ բացի փամփուշտներից, տղան սեղանի տակ տեսավ վարդի տերեւներ, որոնց վրա կար մի գրություն. «Դու կարող ես դ...»: Գրության վրա կար նաեւ մի սլաք, որը դեպի լայն համապատկերով պատուհանն էր ցուցանշում:

Ժանը քայլեց դեպի պատուհանն ու մի պահ սառած հայացքով դուրս նայեց: Երեւում էր մանկական խաղահրապարակը: Անկյունում եղած ճոճանակը գտնվում էր հավասարակշռության մեջ: Ճոճանակի շարժից կարելի էր կռահել, թե քամին, որ ուղղությամբ է փչում: Մի քանի սղարան, երկար պարան՝ անկյունում նետված, եւ մի կարմիր բահ՝ խրված ավազի մեջ: Իսկ խաղի համար անհրաժեշտ դույլը ազատ լողում էր լողավազանի մեջ: Չարմանք եւ միաժամանակ հետաքրքրություն էր առաջացնում գինու շիշը, որ դրված էր լողավազանից դեպի

վերել տանող մարմարե աստիճանների վրա: Ի՞նչ էր նշանակում այս ամենը:
Կարծես մի տարօրինակ զգացողություն լիներ, որը նաեւ վախ էր առաջացնում:

Տղան հանդարտ քայլերով շարժվեց դեպի դուռը: Այնքան հանդարտ, վախվորած
ու դանդաղ էր քայլում, կարծես կողքին քնած մարդիկ կային: Դուռը հրեց՝ բացելու
ու դուրս գալու նմապակով, բայց կարծես ինչ-որ բան խանգարեց դռան
բացվելուն: Ժանն արագ-արագ

ու խուճապահար սկսեց վերել-ներքել շարժել բռնակը: Բռնակի շարժն
ընդհանրապես չէր համապատասխանում մի քանի րոպե առաջվա քայլերին:
Հիշելով սեղանին դրված մատիտի հասցեն՝ վազեց դեպի մատիտն, այն վերցրեց
ու դուռը մատիտով բացելու մեծ հույսի հետ ժամանեց սկզբնական վայր: Երբ
մատիտը մտցրեց դռան բանալու անցքի մեջ, բնականաբար միայն մատիտի
գրաֆիտի ծայրը ներս մտավ: Հետո փորձեց հրելով կոտրել դուռը, բայց ցավոք
ոչինչ չստացվեց:

-Հավերժ փակված եմ այստեղ: Ողջույն նոր ու սահմանափակ կյանք,- գոչեց Ժանն
իր լացակումած ու խուճապահար տոնայնությամբ:

Հետաքրքրասեր էր: Նա շատ արագ կարողանում էր կողմնորոշվել տարածության
մեջ: Նա չէր սիրում տարբերվել, այլ սիրում էր ապրել այնպես, ինչպես իրեն է
հարմար: Ժամացույցը միշտ աջ ձեռքին էր կապում, իսկ ընտանիքի խմբակային
նկարը միշտ անձնագրի հետ էր պահում: Նաեւ կատակասեր էր եւ հմայիչ: Շատ
աղջիկների էր կարողանում խոսեցնել իր ճանապարհորդությունների ժամանակ:
Ուներ լավ հաղորդակցվելու տաղանդ: Ու հանկարծ այս երիտասարդը զգում է, որ
չկան մարդիկ, չկա շարժ, ու միայն բնությունն է ապրում: Ու զգում է, որ բնության
ապրելն էլ չի գալիս: Ի՞նչ անել, ո՞ւր գնալ, ինչպե՞ս գնալ... Ժանը չէր
կողմնորոշվում: Բայց կարծես հասկացավ, որ պիտի ելքի ճամփա գտնի:

Սկսեց շրջել տարածքով, որ ծանոթանա: Դե գիտեր, որ հյուրանոցում է, ու դրա
կողքն էլ խաղահրապարակ կա, բայց ընդհանուր առմամբ ծանոթ չէր ներքին
տարածքին: Ժանն աստիճաններ տեսավ, դրանք աջ կողմում էին: Որոշեց, որ
պիտի հենց այդ ճանապարհով էլ գնա: Երբ աստիճաններով էր բարձրանում,
շուրջը զննում էր, բայց առանձնապես արտասովոր բաներ չկային:

Արդեն երկրորդ հարկում էր, երբ սենյակներ նկատեց: 7-ը Ժանի հաջողակ թիվն
էր, ու դա էր պատճառը, որ նա առաջինն այդ սենյակ մտավ: Դե շրջեց սենյակում,
բայց սենյակ է էլի, ի՞նչ պիտի այտեղ գտներ:

Ժանը որոշեց, որ պիտի թռվռա սենյակի մահճակալին: Հանեց կոշիկներն ու
մահճակալի վրա բարձրացավ: Ու հանկարծ առաջին թռիչքների ընթացքում
երիտասարդը պահարանի վրա դրված վառ կանաչ պարկանման բան տեսավ ու
կտրուկ ցատկով մահճակալից իջավ: Ժանը այնքան բարձրահասակ չէր, որ
կարողանար պահարանի վերելին հասնել: Նա նորից մահճակալի վրա
բարձրացավ ու փորձեց թռչելով հասնել փոքրիկ կանաչ պարկին: Բայց ջանքերն
ապարդյուն էին: Հետո Ժանը անկյունում գիշերային սեղան նկատեց ու դա
փորձեց հասցնել պահարանի մոտ, կանգնեց վրան ու ձեռքը հասավ պահարանի
ծայրին: Բայց նրան պարկն էր հարկավոր: Հետո սենյակի պատշգամբում մի
աթոռ տեսավ ու դա փորձեց դնել սեղանիկի վրա ու բարձրանալ վրան:
Ստացվե՛ց:

Ժանը վերցրեց պարկը, բացեց ու տեսավ, որ մեջը գրույթուն կար.
«Վերանորոգիր հեռուստացույցը»: Սկզբում չհասկացավ ինը թվանշանի իմաստը, բայց երկար մտածելուց հետո գտավ պատասխանը: Նա ենթադրեց, որ պիտի իններորդ սենյակի հեռուստացույցը նորոգի: Տղան շարժվեց դեպի իններորդ սենյակ, բայց դուռը փակ էր: Հուսահատված վերել նայեց: Ու ինչ... Առաստաղին մեծ տառերով գրված էր, որ դուռը բացվում է գիշերը՝ ժամը 3:47-ին: Դե սպասել էր պետք:

Ժանի բախտն իր կողքին էր, դե գոնե ձեռքին կապված ժացույցից ժամը կիմանար: Սպասել, սպասել ու անդադար սպասել: Տղան անընդհատ միջանցքի մի ծայրից մյուսն էր գնում ու վերադառնում:

Վերջապես եկավ սպասված ժամը: Դուռն ինքն իրեն բացվեց, ու ժանը ներս մտավ: Երբ տեսավ հեռուստացույցը, մի պահ ահաբեկվեց: Հետո իրեն հույս տալով՝ նստեց գետնին ու սկսեց մի մասը մյուսին միացնել: Դեռ ամբողջությամբ աշխատանքը չավարտած՝ ժանը եւս մի գրույթուն գտավ, այս մեկն արդեն կիսանորոգված հեռուստացույցի Էկրանի եւ լարերի միջեւ գտնվող արանքից:

-Երրորդ հարկում՝ երրորդ սենյակում մի կին կա, ով վարակված է ժամանակի ամենատարածված վիրուսով՝ covid-19-ով, նրան փրկել է հարկավոր, պետք է հանել կնոջը սենյակից, քանի որ նա իրականում այլևս վիրուսակիր չէ: Կինը վաղուց բուժվել է,- կարդաց երիտասարդը:

Ժանին վախը պարուրեց, բայց հետաքրքրասիրությունը հաղթեց. նա բարձրացավ երրորդ հարկ: Ճանապարհին մտածում էր.

- Ինչպե՞ս է դա հնարավոր: Առաջին հարկում սրճարան է, երկրորդում՝ մեկից քսան սենյակները, իսկ թղթի վրա նշված էր երրորդ հարկ ու երրորդ սենյակ:

Դե իրոք երրորդ հարկի սենյակները պիտի սկսվեին 21-ից: Ժանը հասավ երրորդ հարկ ու տեսավ, որ իրոք սենյակները քսանմեկից են սկսում: Բայց տղան չէր հասցրել տեսնել միջանցքի խորքում գտնվող դուռը, որն ուներ երեք թվանշանի ձեւը: Ու երբ ժանը տեսավ այդ դուռը, միանգամից հասկացավ, որ խոսքը դրա մասին էր: Փորձեց բացել այն, բայց դուռը նորից փակ էր: Ժանը հույսը կորցրած պտտվեց, որ գնա դեպի իր սենյակ, բայց հանկարծ ձայներ լսեց: Ոտնաձայներ էին: Ժանը թաքնվեց, ինքն էլ չգիտեր, թե ինչու: Ախր չէ՞ որ կարող էր եկող մարդկանցից իմանալ, թե որտեղ է գտնվում:

Տղան նկատեց, որ եկողները բժիշկներ են ու գալիս են դեպի երեք թվանշանի տեսքն ունեցող դռան կողմ: Նրանք մոտեցան, քանի հարց տվեցին կնոջն ու գնացին: Ամեն ինչ ավելի հասկանալի կլիներ, եթե տղան լսեր նրանց խոսակցությունը, բայց, ավաղ, այդպես չեղավ: Տղան մոտեցավ դռանը.

- Ողջույն, մադամ, լսո՞ւմ եք ինձ,- ասաց ժանը սկզբում ֆրանսերենով:
- Ի՞նչ եք խոսում, ես ձեզ բացարձակ չեմ հասկանում,- պատասխանեց տիկինը:

Ժանը կարծես չհասկացավ, թե ինչ լեզվով խոսեց տիկինը: Տղան ցատկոտում էր ուրախությունից, կարծես ութ տարեկան երեխայի ձեռքում հայտնված վոլեյբոլի գնդակ լիներ. վերել-ներքել, ներքել-վերել: Բայց մի պահ հասկացավ, որ միայն

Կենդանի շունչ նկատելով՝ այստեղից դուրս չէր գա, խոսել էր պետք, որպեսզի իրավիճակը հասկանալի դառնար:

- Կրկնեք, չեմ հասկանում,- ասաց կինը:

Ժանը կարծես հասկացավ, որ կինը ուկրաիներեն է խոսում: Ժանը փորձեց խոսել ռուսերեն.

- Ասում եմ՝ ողջույն, տիկին:

- Ողջույն, տղամ, բայց դու ո՞վ ես, ինչպե՞ս ես այստեղ հայտնվել,- պատասխանեց տիկինն ու ժանը հասկացավ: Նրա հաջողությունը տիկնոջ պատասխանի հետ եկավ: Կինը խոսեց ռուսերեն, եւ դա երեւի ամենամեծ անակնկալն էր տղայի համար:

- Ես ժանն եմ, կարելի՞ է ներս գալ:

- Կարելի կլիներ, եթե դուռը բացելու հնարավորություն լիներ:

- Կարելի՞ է այն կոտրել:

- Փորձիր,- հուսահատ ձայնով ու հոգոց հանելով՝ պատասխանեց կինը:

Ժանը մի երկու հարված հասցնելուց հետո կոտրեց դռան կողպեքը, բայց տիկինն ասաց, որ չի թույլատրվում ներս գալ իր սենյակ առանց դիմակի: Ժանի հնարամտությունն ամեն պահ կարող էր հյուր գալ նրան: Տղան հիշեց առաջին հարկի ծաղկամանն ու շտապեց այն վերցնելու: Դե հնարամիտ, բայց ո՞վ կպատկերացնի, որ ժանն այդ ծաղկամանը որպես դիմակ կօգտագործի: Քիթն ու բերանը ծաղկամանով փակած՝ տղան մտնում է կնոջ սենյակ, ու կինը սկսում է քրքջալ, ինչպես վարարած գետակը:

-Ի՞նչ պատահեց, տիկին:

-Խելագամ՞ր ես, ի՞նչ է: Ո՞վ է տեսել՝ ծաղկամանը որպես դիմակ օգտագործեն:

-Խնդրում եմ, բացատրե՛ք, թե որտեղ եմ ես գտնվում:

-Ես էլ չգիտեմ: Միայն գիտեմ, որ Ուկրաինայում եմք:

-Ցնդել կարելի է: Ինչպե՞ս եմ ես այստեղ հայտնվել,- քթի տակ մրմնջաց ժանը:

-Լավ, դրա մասին ես էլ չգիտեմ: Ավելի լավ է, արի ելքի ճանապարհ գտնենք:

-Ես այստեղ մարդկանց եմ նկատել եւ հետո առաջին հարկի դուռը փակված է, բացելու համար բանալի է պետք, կոտրել չի ստացվում: Ըստ իս՝ դուրս գալ այստեղից...

-Չհնարավոր է, հանգիստ եղիր: Ինձ այս տձեւ սենյակում են փակել, որովհետեւ շատերին եմ օգնել փախչել այստեղից: Վարակվածներին փակում են մի ուրիշ շենքում, հետո երբ նրանք լավանում են, բերում են այստեղ: Բայց, ինչպես տեսնում ես, լավացողները քիչ են, շենքում մենք ենք՝ ես ու դու, եւ մի երկու բժիշկ: Ես շատերին օգնեցի, ու բոլորը փախան՝ առանց ինձ օգնելու: Լավ, դե շարժվենք դեպի առաջին հարկ, վերցնենք մեր իրերեն ու դուրս գանք:

-Լավ,- ծաղկամանից լավեց ժանի ձայնը՝ խորը ձորից լսվող ձայնի նման:

Նրանք դեպի առաջին հարկ շարժվեցին, վերցրին իրերն ու փորձեցին դուս գալ: Ժանը հրեց դուռը, բայց արի ու տես, որ այն փակ էր:

- Ի՞նչ արեցիր: Մի՞թե համբերություն չունես:

- Ես... Ես ուղղակի... Ախր ես ուղղակի ցանկացա բացել դուռը:

- Դե հիմա ուշադիր լսիր,- ասաց կինն ու առաջարկեց, որ մինչ պատմությունը լսելը թաքնվեն, որ ոչ ոք նրանց չլսի,- այստեղ ամեն դուռ ու ամեն սենյակ իր

գաղտնիքն ունի, - ես գիտեմ այդ մասին, մինչ ձեզ հասնելն անցել եմ այդ ամենի միջով,- կնոջ խոսքը կտրելով՝ ասաց ժանր:

- Մի ընդհատիր, խոսում եմ: Ես էլ քեզ նման հայտնվեցի այստեղ ու չգիտեի ինչ անել: Հետո սկսեցի շրջել տարածքում: Ու հասկացա եղելությունը: Ամեն դռնով մտնում ու ելնում էի: Դե հուշումների ու առաջադրանքների շնորհիվ: Երբ հասա այս վերջինն դռանն ու հրեցի, որ բացվի, վրան գրվեց, որ պիտի մի թվական հավաքեմ, որն ինձ համար կարելու է նշանակություն ունի:

-Ու ինչ: Հավաքեք նույն թիվն, ու այն կբացվի:

-Լսիր, տղա՛, այլևս ինձ չընդհատես, այլապես հավետ այստեղ կմնաս:

-Լավ, լռում եմ, շարունակեք:

-Ամեն ինչ այդքան էլ հեշտ չէ: Այդ հուշումը մի անգամ է երեւում՝ ի տարբերություն մյուսների, եւ միայն մեկն է իմանում այդ մասին: Դե այդ մասին ես գիտեմ միայն, առաջինը ես եմ փորձել բացել այս դուռը: Ես հիշեցի այդ թիվն, ու դա քրոջս ծննդյան թվականն էր: Նրա ծնունդով կյանքս սկսեց երջանկանալ: Երբ բացեցի, կարողացա յոթ հոգու դուրս հանել, բայց ես չհասցրի դուրս գալ, ու ինձ փակեցին այդ սենյակում: Մինչ այդ մտածեցի, որ հնարավոր է՝ այստեղից էլի մարդիկ դուրս գալ ցանկանան, ու ձեռքիս տակ թուղթ չգտնելով՝ վարդի թերթի վրա գրեցի «Դու կարող ես դ...»:

-Կարելի՞ է խոսել,- գայլ տեսած նապաստակի հայացքով ու կակազելով՝ հարցրեց ժանր:

-Այո:

-Այդ գրությունը ես գտա ու չհասկացա՝ ինչ էր դա նշանակում: Միայն ըստ սլաքի շարժվեցի դեպի պատուհանն ու տեսա դատարկություն: Հետո հասկացա, որ մի բան այն չէ:

-Դե իրականում այդտեղ պիտի գրվեր հետեւյալը. «Դու կարող ես դուրս գալ այստեղից: Բարձրացիր վերեւ ու ամեն ինչ ինքդ կհասկանաս»: Իսկ սլաքն ուղղված է եղել դեպի վերեւի հարկ, այլ ոչ թե պատուհան: Ես չհասցրի ամբողջությամբ գրել, ինձ վերեւ տարան: Հիմա անցնենք բուն թեմային: Ով դիպչում է բռնակին, նա էլ պիտի իր կյանքի նշանակալից թիվը գրի: Եթե սպասեիր հիմա ամեն ինչ ավարտված կլիներ:

-Իմ կյանքում շատ են կարելու դեպքերը, բայց ամենանշանակալիցներից են երկուսը. առաջինը ծնողներիս բաժանումն է, իսկ երկրորդը՝ հորս ամուսնությունն այլ կնոջ հետ: Այս ամենից հետո իմ կյանքը շրջվեց: Ես ֆիզիկապես ապրում էի, բայց հոգիս մեռած էր: Փառք Աստծո, մայրս հիմա կողքիս է:

-Իհարկե, ցավում եմ, բայց հիշում եմ եղ դեպքերի թվականները: -Ոչ, չեմ հիշում...

-Այ քեզ բան, հիմա ի՞նչ պիտի անենք, մնացինք այստեղ,- խուճապահար պատասխանեց տիկինը:

-Տիկին, ես դեռ չեի վերջացրել: Ես իմ փաստաթղթերի հետ օրագիրս եմ պահում, դրա մեջ հաստատ գրած կլինեմ:

Մինչ ժանն իր օրագրի գրություններն էր քչփորում. կինը նկատեց, որ մտերմացել են իրենք ու կարճ ժամանակում գրեթե ամեն ինչ իմացել են միմյանց մասին: Այսպես է, եթե մնում ես փակ տարածքում ու դրա գերին դառնում, սկսում ես հասկանալ ու գնահատել շփումը, եւ հոգիդ մարդկանց է փնտրում: Հոգիդ կարոտում է բոլոր կեղծ ու անկեղծ ժպիտներին:

-Գտա՛, - բղավեց ժանր,- իրար կողքի էլ գրել եմ:

Ժանն առաջինը հավաքեց հոր երկրորդ ամուսնության թվականը, դա ծանր հետք էր թողել նրա սրտում: Բայց ավաղ չստացվեց: Երկու փորձի հնարավորություն էր

մնացել: Ու ժանը հավաքեց երկրորդ թվականը՝ հոր ու մոր բաժանման թվականը: Դուռը բացվեց, ու լսվեցին ցնծության ձայներ: Վերջ, ավարտվեց, վերջացավ մաքառումներով լի ճամփորդությունը: Նրանք դուրս եկան, ու կարծես աշխարհն իրենցն էր: Երջանկություն էր տիրում: Կարծես ցմահ մարդասպաններ էին, ովքեր արդեն ազատության մեջ էին գտնվում: Ժանը հասկացավ, որ կամայականությունն ու ազատությունը տարբեր հասկացություններ են: Ամեն ինչ մնաց անցյալում: Ու թեեւ այդ անցյալը երեք թուփե առաջն էր, դա նրանց չէր խանգարում անցյալ կոչել:

- Վե՛րջ, տատիկ:
- Այո՛, քաղցրի՛կս, հենց այսպես է քո մայրիկի պապիկը՝ իմ հայրը 2020 թվականին պայքարել covid-19-ի դեմ:
- Իսկապե՞ս: Հիսուն տարի առա՛ջ:
- Այո՛, մոտավորապես հիսուն տարի առաջ:
- Իսկ դու ծնվա՞ծ էիր այդ ժամանակ:
- Ես միայն մի քանի տարի անց եմ ծնվել:
- Տատի՛կ, իսկ քո հայրիկը նաեւ արտակարգ դրության ժամանա՛կ է եղել:
- Քաղցրիկս, հենց համաճարակի պատճառով է հայտարարվել արտակարգ դրություն: Հայրիկս ասում էր, որ բոլորը դիմակներով էին ու ձեռնոցներով, իսկ եթե չէին կրում դրանք, տուգանում էին: Ամեն թուփե հարկավոր էր լվացվել ու ախտահանել ձեռքերը, իսկ հիմա ամեն ինչ շատ հեշտ է. անցնում ես դռան միջով ու ավտոմատ ախտահանվում՝ շնորհիվ դռան երկու կողմերը փչվող նյութի:
- Տատի՛կ...,- մի պահ գոչեց ու լռեց փոքրիկը:
- Այո՛, ժան: Խոսի՛ր, լսում եմ:
- Տա՛տ, իսկ ի՞նչ էր տիկնոջ անունը:
- Հայրս չէր հիշում նրա անունը, երբեք չի ասել: Դե երբ նա ինձ պատմում էր այս պատմությունը, ես մոտավորապես քո տարիքին էի, ու այդ ժամանակ հայրս աղոտ էր հիշում:
- Տա՛տ, իսկ ինչի՞ց էր առաջացել այդ... Այդ հիվանդությունը էի... Ի՞նչ էր...
- Covid-19 կամ կորոնավիրուս: Դա ոչ ոք չգիտի: Միայն վարկածներ էին պտտվում: Այդ վարակի մասին սկսեցին երգեր հորինել, շուտաստելուկներ ու բանաստեղծություններ:
- Վայ, տատի՛կ, ինչ հետաքրքիր է, երգի, էի, խնդրում եմ, մենակ չասես՝ չես հիշում,- վստահ ասաց փոքրիկը:
- Խորամանկի մեկն ես, հիմա փորձեմ տեղը բերել: Մի քանի թուփե սենյակում լռություն տիրեց, հետո կարծես տատիկը բացեց աչքերն ու սկսեց արտասանել.
- Վա՛յ, կոռոնա, կոռոնա,
Նամուս, թասիբո ու՛ր ա:
Քեզ ո՞վ կանչեց, ա՛յ անկոչ,
Այ դու ուտես մկան պոչ:
Պտտվում ես աշխարհում,
Քո սեւ գործը տարածում,
Բայց տե՛ս, գարնան շողի հետ
Կորչելու ես դու անհետ:

Լսվեց փոքրիկի քրքջոցն ու տատիկը նույնպես սկսեց ծիծաղել:
-Տատի՛կ, իսկ...

-Վերջ, ոչ մի իսկ: Գնանք քնելու, արդեն ուշ է: Վաղը կշարունակենք: Միգուցե չլինեի այս ամենը հենց ժանի ու անհայտ տիկնոջ հետ: Միգուցե չփոխանցվեի այս պատմությունը մինչև ժանի աղջկա թոռանն, ու ամեն ինչ մոռացվեի: Բայց եղավ այն, ինչ եղավ, ու հիմա փոքրիկ ժանն իր անունը հպարտությամբ է կրում, ասելով, որ իր մեծ պապիկը հաղթել է պոզավոր կորոնավիրուսին: Ժանն ամենուր է խոսում այդ մասին: Ու միգուցե ժանը լինի այս պատմության տարածողը...